

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2004

ԱԶԱՏ ՍԻՆՏԵԶ

Սև էջերի փաստերի Բօլշևիկների հնգամսեայ
գործունեության թիւնից:

Տպարան «Սասուն»
Երբիս

1921 թ.

ՅԿՈՒ (47.928)
Ա-22

3KPI(91 325)

ԱԿ-22

ՀՐԵՑԱՐԵԿՈՒԹ. ԻՆՎԵՆՎԱՐ ՍԻՆԵԿԻ ԽՈՐՀՐԻՐԸՆԻ

ԱԶԱՏ ՍԻՆԵԿԻ

20
2443

1000

Սև էջեր և փաստեր Բոլշևիկների հնգամսեայ
գործունէութիւնից:

1907



Երևան «Մատան»
Գրիս

1921 թ.

Սօցեալիզմի անունից խօսող և քարոզող շատ կուսակցութիւններ կան, որոնք այս կամ այն ուղղութեամբ առաջ են տանում իրանց դրօշը և մարդկութեան հոգուն և սրտին տիրել կամենում:

Եւ ամեն կուսակցութիւն իր սրտից ելած խօսքի և արտայայտութեան համապատասխան գործնէութիւն պէտք է ունենայ ժողովրդի մէջ հմայք և սէր ձեռք բերելու համար:

Սակայն, այն բոլոր փքուն և գեղեցիկ բաներով շարահիւսած լօզունգները, որ պատմական Սիւնիքի հայ ազգաբնակչութիւնը դժբախտութիւն ունեցաւ լսելու բօլշեփկեան կառավարութեան 5 ամսեայ տիրապետութեան ընթացքում նրա հոկտոբրների, երդւեալ կոմմունիստների և աշխատաւոր գիւղացիութեան շահերի ջերմ պաշտպան հանդիսացող գործիչների բերանից, միանգամայն հակապատկերն էին առանց դասակարգերի խարութեան թալւենուդ հասարակութեան նկատմամբ գործադրւած բռնութիւններին, կեղեքումներին, սպանութիւններին և կործանարար իւրացումներին:

Այդ իսկ նպատակով, լոյս է տեսնում ,ՇՁԵՏ ՍԻՆՆԻՔԸ“, մի աւելորդ անկամ ևս գալու և ցոյց տալու քաղաքակիրթ աշխարհին այն փնտասկար, այն բռնազբօսիկ և ոչ մի կրթական չը զիմացող քաղաքականութիւնն ու գոր-

019



448-93+

25886 141

ծելակերպը, որ ունի բօլշեիկեան կառավարութիւնը և որ Զանգեզուրը իր կաշւի վրայ փորձեց ու զգաց:

ԱԶԱՏ ՍԻՒՆԻՔԻ էջերում, շատ համառոտակի և անպաճոյճ կերպով գետեղւած են այն բոլոր ճշգրիտ և կատարւած դէպքերն ու փաստերը, որ բօլշեիկեան կառավարութիւնը գործադրել է Զանգեզուրում և որի ճնշման ու ազդեցութեան տակ ազատասէր զանգեզուրցու համբերութեան բաժակը լցւելով, իր լաւագոյն գաւաղների արեան գնով ձեռք բերած ազատութիւնը վերագնահատելով, նահատակների և մարտիրոսների շիրիմների առաջ անպարտ չմնալու համար, նա, ըմբոստ զանգեզուրցին, ապստամբութեան գոռոզ դրօշը պարզեց և անկոչ հիւրերին դուրս բռնեց իր սահմաններէն:

ԱԶԱՏ ՍԻՒՆԻՔԸ թող լինի այն ծով արցունքների, այն ովկիանոս վշտերի, այն լեռնացած ու սեպացած վրէժների մի կաթիլն ու բեկորը, որ իր կրծքից, իր հոգու խորքից հանում, դնում է համաշխարհային դատի սեղանին. հայ մանուկը, հայ ծերունին, լլուլւած կոլսն ու հարսը և մեր այն լաւագոյն գաւաղները, որոնք գլխատւեցան մութ գիշերներին ու իրանց վրէժի կրակոտ խօսքը, ցասումն ու բողոքի զայրոյթը ասեն-թող կոռչի անունը կարմիր, զործը սև, խօսքը քաղցր, սիրտը թոյն բօլշեիկում-մարդկութեան անէծքը:

S. U.

ԻՆՔՆԱՎԱՐ ՍԻՒՆԻՔԻ ՀԻՄՆԸ.

Մեր սարեր անառիկ և հպարտ,
Մեր որդիք կորովի և անպարտ.
Խոր ձորեր Սիւնիքի ահաւոր,
Շիրիմ են թշնամու դարաւոր:

Թշնամին հազարով միշտ մեր դէմ,
Կուրծք կրծքի մենք կանպնած նրա դէմ,
Զենք զոզում, շենք սարսում մենք
մահից,

Մեր մահը թեթև թիթեռի թևից:

Ինքնավար Սիւնիքին ցանկանք,
Միշտ լինել թշնամու սպառնանք,
Շատ ապրի մեզ համար այսուհետ,
Քաջ հերոս Նժդեհ Սպարապետ:

S. U.

ԲՈՒՅՆԻՅՆԵՐԸ ԶԸՆԳԵԶՈՒՐՈՒՄ.

Համաշխարհային մեծ պատերազմի ալիքները հասնելով Կովկաս, պատմական հպարտութիւններով հարուստ Սիւնիքը ևս հանդիպեց այդ ալիքների կործանարար գարկերին:

Հայ սերունդի դարաւոր թշնամի և դահիճ Տաճկական հորդաները Բագուն գրաւելուց յետոյ, իրանց ընթացքը ուղղեցին դէպի Ղարաբաղ-Չանգեզուր: Հազարաւոյ զօրամասեր, տեղական սուպահներ և հետ միացած, Արազի ափով առաջացան և գրաւեցին Ղարաբաղ-Չանգեզուրի Վերդէն-Ղարալըշլաղը, կոտորեցին, աւերեցին և փլատակների վերածնցին արծիւների բունը: Ապա շրջագաւեցին լեռնային Ղարաբաղը և 1918 թ. 24-ին սպանման գրաւեցին Ղարաբաղի սիրը - Շուշին ու ենթարկեցին Ադրբեջանեան կառավարութեան:

Տաճկական հորդաները յղիացած իրանց յաղթութիւններով, մտայնաւ Չանգեզուրի սահմաններին, ուր այդ ժամանակ բախտի բերամամբ գտնուում էր մեր ազգային հերոս Անգրանիկը իր զօրամասերով: Տեսնելով Չանգեզուրի ազգաբնակչութեան վճռական որոշումը և Տաճկական զօրքին դիմագրելու ցանկութիւնը, Անգրանիկը գլուխ է լանգնում քոյր կուռղ ոյժերի և դիմադրում ւնի բոլոր սրտներին, սրտնք ուղղում էին թշնամու կողմից և պահպանում

է հայ ժողովրդի կեանքը, Զանգեզուրի ինքնուրոյնութիւնը:

Կաջ գիտակցելով, որ Զանգեզուրը առանց Ղարաբաղի կեանք ունենալ չէ կարող, Անդրանիկը արշաւանք է ձեռնարկում դէպի Ղարաբաղ, ուր մօտաւորապէս 300 հազար հայութիւն տառապում էր տաճկական փաշաների ձեռքին, սակայն ինչ ճանապարհին այդ առաջխաղացումը անպիացիների միջամտութեան շնորհիւ դադարեցւում է:

Տաճկական զորամասերը այնուհետև սկսում են մի շարք ուղղութեամբ յարձակումներ կատարել Զանգեզուրի դէմ, որոնք բոլորն էլ յետ են մղւում մեծամեծ կորուստներով, մինչև որ ազգաբնակչութեան բուռն ցանկութեամբ Հայաստանի հանրապետութիւնը ուղարկում է իր ներկայացուցիչը, Ա. Շահմազեանին 1919 թ. մարտի 12-ին:

Նոյն թիւ մարտի 25-ին գեներալ-մայոր Անդրանիկը անգլիական կառավարութեան կարգադրութեամբ թողնում է Զանգեզուրը և իր զօրամասով հեռանում, իր պահած, պահպանած ու փայփայած գաւառը թողնելով հանրապետութեան ներկայացուցչի ինամքին:

Անդրանիկի հեռանալուց յետոյ ևս մի շարք փորձեր են կատարւում Զանգեզուրը Ադրբեյջանին հպատակեցնելու նպատակով, սակայն այդ բոլորը մնում են լուրջ փորձեր և հայ ազգաբնա-

կութիւնը վերագնահատելով հպարտ մահը, ստրուկ կեանքից, բոլոր պիմուկներին պատասխանում է ազատ, հպարտ ու երկրին յատուկ վճռական կերպով շեշտում, որ իր գիակների վրայով միայն թշնամին կարող է առաջանալ և տիրել Զանգեզուրը:

Նոյն թիւ ապրիլի 7-ից տեղի են ունենում մի շարք բողոք — միտինգներ և հսկայական ցոյցեր այն բոլոր ոտնձգութիւնների դէմ, որոնք կամե՛րում էին բռնի կերպով Զանգեզուրը հպատակեցնել Ադրբեյջանին:

Պատմութեան թողնելով այդ քաղաքական դաւերը, կասենք միայն, որ հերոս ժողովուրդը իր յատուկ դերը սրբութեամբ կատարեց և պաշտպանեց իր երկիրը անձուրաց կերպով:

Հասաւ ամառը. մինչ հայ աշխատաւոր գիւղացիութիւնը սկսում է իր եռուն աշխատանքը, տաճկական զօրամասերը Ղափանի մի շարք գիւղերի դէմ յարձակումներ են սկսում: Ղարաբաքա, Ուժանիս, Ագարակ և Մողէս գիւղերը թէ և դատարկւում են ու թշնամու գերազանց ոյժերի ճնշման տակ հեռանում, սակայն կուռղ երիտասարդութիւնը անվեհերութեամբ յետ է մղում բոլոր ազրիսիւ յարձակումները և դէն շարտում թշնամուն, մեծամեծ կորուստներ պատճառելով նրան:

Արևմուտքից — Նախիջևանի կողմից ևս դէպի Զանգեզուր են շարժւում թուրքական ոյժեր,

սրոնք գրանելով նորո, Գիւմրի, Գժաձոր և Ղ. Մազրա հայկական զիւղերը, աւերելով, թալանելով ու կոտորելով ժողովրդին մօտենում և կանգ են առնում Զանգեզուրի սահմանում:

Մի շարք ապարդիւն փորձերից յետոյ, տաճկական զօրամասերը ստիպում են Ազրբէյջանի կառավարութեանը մեծ սյգով ընկճել Զանգեզուրի գոտողութիւնը և կռւով հպատակեցնել ազատատէր և ըմբոստ ժողովրդին:

Ազրբէյջանական 16 հազարանոց բանակը Քէչալ-դաղից շրջապատում է Գորիս քաղաքը, Խոզնափար, Խնածախ, Տեղ, Արաուս, Կուինձոր և Խնձորեակ զիւղերը, իսկ հարաւից ամբողջ Ղափանը: Ուրի է երևում զանգեզուրցին, լարում իր բոլոր սյգերը և միտիրտ, մի հոգի դարձած օղակում փտանգի բոլոր շրջանները և պոդպատի պէս կուրծք գէմ տալիս թշնամու բոլոր յարձակումներին և գորս շարտում իր սահմաններից: Աւերում և թալանում են մի շարք զիւղեր, սակայն Զանգեզուրը իր տարած այդ մեծ յաղթանակով ցոյց է տալիս համայն աշխարհին, որ ինքը կամենում է ապրել ազատ և անկախ ու կցել Մաշր Հայաստանին, որպէս նրա անբաժան մի երկրամաս:

Ազրբէյջանական մի զօրամաս, որ գտնւում էր Արաղի ափին, տեղական թրքութեան հետ միտին գեկաւմբերի 25-ին յարձակում են ներքին և վերին Ազուլիոնների վրայ, աւերում

թալանում ու մինչև վերջին շունչը սրի քաշում մի զիւղերայ ընթացքում ամբողջ հայ աղգաբնակութեանը: Այդ Բարդուղէմեան զիւղերը անմոռաց պիտ մնայ հայութեան սրտում և տաճիկ սպայ էղիֆ-բէյի անունը լսելիս, վրէժի և ատելութեան կնճիւղը պիտ ունենայ ամեն մի հայ մարդ:

Գալիս է 1920 թիւը: Զանգեզուրի հայութիւնը նոր տարում ևս ստիպւած է լինում զիւղեր և ցերեկ հսկել իր սահմանները թրքութեան մի շարք տանձողութիւնների դէմ և ինչպէս միշտ այս անգամ ևս քաջաբար պաշտպանում իր երկրի սահմանները:

Այդ ժամանակամիջոցում բոլշեիկները գրաւում են Բազուն և Ազրբէյջանեան կառավարութիւնը կերպարանափոխում է սովետականի: Սովալլուկ և մերկ բոլշեիկները աննդեան տեղ գտնելով հարուստ Ազրբէյջանը, իրանց ծառայութիւնն են մատուցանում և որպէս սովետական Ազրբէյջանի զօրամասեր անաջ շարժում ու գրաւում Ղարաբաղը:

Բոլշեիկների փքուն և զեղեցիկ լողունգները հասնում են և Զանգեզուր. չէ որ հայր հաւատացող է, չէ որ հայը ամբողջ 4-5 տարի է ուռւակահան արդիւնարեքութեան, սուսական շաքարի, Բագուի նաւթի և վերջապէս ուռւս մարդու դէմքի կարօտ է:

Հայ տականքներ, որոնց համար գոյութիւն չունի ազգ, կրօն, ընտանեկան սրբութիւն և

ինքնորոշութեան ձգտում, ի մի հաւաքած, Չանգեզուրի գանազան գիւղերում, գաղտնի կերպով, իրանց յատուկ զինն էին կատարում և գերեզման փորում թէ Հայաստանի հանրապետութեան և թէ հայ ժողովրդի համար: Եւ իրանց զիւային սև աշխատանքները մինչ այն աստիճան առաջ են տանում, որ որոշում են ինչ գնով ուզում է լինի ծախել Չանգեզուրը և հնարակել սովետական Ադրբեյջանին:

Ապիկար և բախտախնդիր այդ տականքները գիւղերում սկսում են ծածուկ կերպով քարոզել բօլշևիկների բերելիք արքայութեան, խաղաղ կեանքի և այն բոլոր բարիքների մասին, որին ինչպէս ծարաւի և կարօտ է Ռուսաստանը, նոյնպէս և Չանգեզուրը ու խաբերայութեամբ մի շարք գիւղերում կեղծ համախօսականներ կազմելով ներս են հրաւիրում սովետական վարձկան զօրամասերը:

Եւ Ղարազեօզեանների դաւադիր, ոճրագործ և ստոր արարմունքները իրանց նպատակին են հասնում ու յուլիսի 5-ին Չարուղի ձորից Տեղ գիւղը հրաւիրում սովետական զօրամասը: Երեք տարի իր երկրի, օջախի և պատւի պաշտպան հալը յոգնած զիրքապահութիւնից և զէնքի ծանրութիւնից, գրկաբաց կերպով դիմաւորում է իր ոռու կարծեցեալ եղբորը:

Առաջին դիմաւորումը տեղի է ունենում սահմանի վրայ գտնուող Տեղ գիւղում:

Հայկական զօրամասերը, հիմնարկութիւնների մի շարք պաշտօնեաներ և անհատներ, որոնք սովետական զօրամասերի ներկայութիւնը տանել և ապրել չէին կարող, Չանգեզուրը թողնում և հեռանում են դէպի Երևան: Եւ կարծես թէ առանց յետին մի ակնարկ ձգելու իր վերջին տարիների ունեցած փոթորկալի կեանքի վրայ, խաբած Չանգեզուրը դիմաւորում է սովետական զօրամասերին և արիւնով ձեռք բերած հարազատ Հայաստանի հանրապետական կարգերը մոռացած, ընկղմւում «ընկերական» սիրուն բռնբռով արտայայտուող ոռու և հայ եկւորների գիրկը ու Քորէք լեռան ստորոտում կանգնած իսրայէլացու նման բերանաբաց սպասում իր վերջնական խաղաղ և անդորր կեանքին:

Հասնելով Գորիս քաղաքը, բօլշևիկները առաջ են շարժւում Սիսեան ու յետամտում հեռացող զօրամասերին և զաղթողներին ու հասնում Բաղարշայ, իսկ Բոնակոթի վրայով կապ հաստատում Նախիջևանի թրքութեան ու Տաճկաստանի հետ և ստեղծում մի կամուրջ Տաճկաստանի և Բագւի միջև, որով անց ու դարձ են անում, մինչև իսկ Բագւի «արևելեան ժողովուրդների համագումարին» մասնակցելու մեկնում Էնկեր-Սալիլները և Նուրի-փաշաները շատ շատերի հետ միասին:

Սիսեանը գբաւելուց յետոյ, բօլշևիկները քանիցս յարձակումներ են ձեռնարկում և գէպի

Ղափան, սակայն տեղական ժողովուրդը զլիսա-
 ւորութեամբ նժգեծի, որը հայկական գործա-
 սերը հեռանալուց ազգաբնակչութեան բուռն ցան-
 կութեամբ վերադարձել էր Ղափան, պաշտպա-
 նում է իր սահմանները և յետ մղում Բօլշևիկ-
 ների բոլոր գրոհները ու մեծամեծ կորուստներ
 պատճառում նրանց:

Երկար զիմադրութիւնից յետոյ, Ղափանը
 ևս ընկճուում է գերագանց ոյժերի ճնշման տակ,
 իսկ կուռղ երիտասարդութիւնը հրամանատարի
 հետ միասին ապաստանում են Գենուտում, Խուս-
 տուփ յերան բարձր կատարը բռնում:

Իսկ այդ ընդլին ինչ էր կատարուում գա-
 ւառի ներսում, բօլշևիկ զօրքի թիկունքում. սն-
 նկարագրելի, չտեսնուած, Լենկ-թեմուրի, Արար-
 ների, Զինգիգ-խաների տարածած ստրտափը նը-
 սեմացնող մի դժոխք էր պատկերանում մար-
 դու առաջ:

Հացի, մսի, շորի և այլ պարենի կարօտ,
 ապրելու տենչով բռնուած 8-10 հազարանոց
 քաղցած բանակ-իսկ զիմացը Զանգեզուրի հայ
 շարքաշ զիւղացիութիւն:

Վերցրու, խլիր, գրաւիր ինչ որ կր տեսնես,
 փորժիր, բրբրիր և գաիր ինչ որ կարող ես և
 առանց որ և է ամօթի թալանիր և ուտելիք և
 հագնելիք ու ամեն ինչ:

Ահա բօլշևիկների գործնէութեան իսկական
 պատկերը Զանգեզուրում:

Մի քանի շաբաթ միայն Ղափանը մնաց
 բօլշևիկների տիրապետութեան տակ. քամւեց
 ու թալանեց հայ ժողովուրդը և շնորհիւ Խուս-
 տուփի բարձրութիւնները ապաւինած կուռղնե-
 րի, վերագրուեց կրկին հրամանատար նժգեծը:

Ահա այդ ժամանակ բօլշևիկները զիմեցին
 մի այլ փորձի: Նորա տեսնելով սուս գօրքի թու-
 լութիւնը, տեսնելով իրանց տւած հսկայական
 զգհերը, Բագւից բերել տւին Խուսաստանում
 զիւրի մնացած տանկական ասկեարներից կազմած
 մօտ հազար հոգուց բաղկացած մի գօրամաս:

Երկրի իսկական պատկերը դառնում է կա-
 տարեալ դժոխք, բօլշևիկների գործած բռնու-
 թիւնների ալան-թալանի վրայ տւելանում է տա-
 ճիկ ասկեարներին յատուկ բարբարոսութիւն-
 ները և հայ զիւղացին այդ ժամանակ միայն
 գղում է որ իր գոյութեամբ ծաղրոււմ են, իր
 կեանքը վառնգւած է, իր ընտանեկան սրբու-
 թիւնը ոտնահարւած է:

Յանուն յաղթութեան, ասկեարները լիա-
 գօրւած էին ամեն տեսակ գործողութեան հա-
 մար և չկար մէկը, որ վատահամար ձայն հանել,
 բողոք բարձրացնել կատարուող քստմենի զէպ-
 քերի համար: Պապանձւած ու փականք էր
 դլւած մարդկանց մտածողութեանը, զգացմուն-
 քին, և մարդկային արժանապատուութիւնը հաս-
 նում է գերօյի:

Եթէ որ և է անհատ էլ տեսնում, շափում

էր գործադրւած գազանութիւնների անօրինակութիւնը, տերրորի ազդեցութեան տակ, նա միայն իրեն էր տանջում, իրան վնասում, իր ներսում, իր սրտում քամելով դառնութեան բաժակը:

Անհրաժեշտ է քաղաքակիրթ աշխարհին համառօտակի կերպով ներկայացնել կատարւած բարբարոսութիւններից մի քանի նմուշներ, որ պարզ լինի թէ բօլշևիկական 5 ամսւայ տիրապետութիւնը Չանգեզուրում ինչ կերպ է առաջ տարւել:

Ահաւասիկ տւեալներ, որոնք արձանագրւած են Չանգեզուրի Գիւղացիական Ժամանակաւոր Խորհրդի 1920 թ. նոյեմբերի 30-ի նիստում:

Տ. Ս.

Հինգ ամսւայ ընթացքում բլշևիկների Չանգեզուրում կատարած սխրագործութիւններից բերում ենք հետևեալ ազդողոյ փաստերը, որոնք զետեղւած են բուն-Չանգեզուրի Գիւղացիական Ժամանակաւոր Խորհրդի 1920 թ. 30 նոյեմբերի արձանագրութ. ան մէջ:

1920 թ. Օգոստոսի 2-ին, Հաւաստանի հանրապետութեան Պարլամենտի անդամներ, գրական գործիչներ և աշխատաւոր գիւղացիութեան շէնքի պաշտպան Վ. Խորէնուն և Ա. Շիրինեանին, առասց որ և է քննութեան գլխատում են, սխեանցիւնը՝ Մ. Աղամեանի և Զ. Տէր-Ղաղաբեանի հետ միասին:

Նոյն ամսի 3-ին Գորիսից դէպի Շուշի են տարւում 17 բանտարկեալներ—Զ. Տէր-Դաւթեան, Գ. Մախչեան, Պ. Փարսեան, Եղբայրներ Դ. և Գ. Տէր-Մկրտչեաններ, Ա. Դաղայեան և մի շարք գիւղացի երիտասարդներ և Աղալարում գնդակահարւում, որոնցից Կոռնիձոր գիւղի Գրեգոր քահանան զիակները միջից 11 վերջով փախչում և հրաշտով ազատւում է:

Հոկտեմբերի 16-ին, գիշերը, Գորիսի բանտում, ցարական ընթիմի ժամանակ 10 տարով բանտերում շղթաներ մաշած Սաքօն զազանաբար սպանւում է իր 12 ընկերներ Յ. Մալինցեանի, Ա. Միրաքեանի, Ա. Տէր-Մկրտչեանի, Փ. Մելիք-Փարսաղանեանի, Հ. Շալունցի և ռաշպար գիւղացիների հետ միասին:

Արցախի գիւղում 252-րդ գնդի վոյենկոմ Իվանովը հրամայում է մանուկներից մինչև 80—90 տարեկան ծերունիներին անգամ չխնայել և կոտորել: Հրականը կատարելուց յետոյ, XI-րդ զօրաբանակի կոմիսսար Ղարադեղեանը Նարիմանովին ուղղած գեկուցման մէջ, խղճի խայթ զգալով, շեշտում է, որ նման դէպքերը նսեմացնում և վարկաբեկում են սովետական կառա

448-93
1402
4453



վարութեանը:

Բացի մասսայական սպանութիւնները, իրանց մտած բոլոր գիւղերում սօվետական զօրամասերը կատարել են մի շարք անհատական սպանութիւններ և բռնութիւններ: Այսպէս օրինակ.—Տեղ գիւղը, որը գտնուում է ճանապարհի վրայ, իր կրած մի շարք կեղեքումներից և բռնագրաւումներից ազատելու համար, խնդրագրով դիմել էր «բանուորա-գիւղացիական տեսչութեան», Չանգեղուրի գաւառական ղեկավարին և Գորիսի զարնիգօնի պետին, իրանց մի այլ շրջան տեղափոխել և գիւղը ազատել իր ծանր և անելանելի վիճակից:

Գորիս քաղաքից տարել են մօտ 2000 գորգեր, 1000 հատ կապերտներ, կարի մեքենաներ, պահարաններ և այլն:

Յածր տների կրկնորդ յարկերում անգամ ձիաներ են կապիլ: Փշացրել և աւերակ են դարձրել 100 տուն:

Վառել են տների, որոնց թւում գիմնագիծնի յատակի, առաստաղի և պատուհանների փեղկերը և դռները. տասնեակ տներ են փլւել և աւերել:

Սօցիալիզացիայի փոխարէն բօլշևիկները իրանց մտած գիւղերը սիֆիլիզացիայի են ենթարկել. յդիացած են 14-ից 15 տարեկան աղջիկներ, որոնք բօլշևիկների հեռանալուց յետոյ, սոսկալի տանջանքների ենթարկելով, աշխատել են ազատել այդ անպատուութիւնից և այժմ իրանց սև օրն են անիծում:

Հին-Գորիս, Նայլի, Չափնի, և Ձէյվա գիւղերի եկեղեցիներում ձիաներ են կապել և ապականել եկեղեցիները:

Սպասելիք ապստամբութեան, իրրև պատանդներ, հարիւրաւոր մարդկանց բանտ են ձգել և ամիսներ շարունակ ահ ու սարսափի տակ պահել նոցա:

Թալանի նպատակով, կէս գիշերները, խուզարկութեան անւան տակ, տասնեակ տներ են մտել և

գրաւել ոսկի, արծաթ, կանանց արդ ու զարդ, կերպասեղէն և այլ իրեր:

Յուլիս և օգոստոս ամիսներում միմիայն Բուն-Չանգեղուրի շրջանից Բագու են տարել 20 հազար փութ ցորեն և ալիւր, առանց մտածելու, որ գիւղացիութիւնը ինքը տառապում է սովի ճիւղաններում:

Քաղաքում և գիւղերում բռնի կերպով վերցրել են կանանց զլխի և օրիորդների կրծքի զարդեր—արծաթ և ոսկի. տաճիկ ասկեսարները իրանց ձիերի կրծքերը զարդարել էին այդ զբաւած շրջանով:

Իրանց փախստի ժամանակ, նոյեմբերի լոյս 21-ի դիշերը, քշել են մօտ 300 եզ, ձի, և ջորի ու իրանց արօզը փոխադրել դէպի Շուշի. մինչև այժմ այդ անասունների և քշող մարդկանց տեղն անգամ ւնյայտ է:

Փ Ա Ս Ս Ս Ս թ Ղ Թ Ե Բ

Բօլշևիկների կողմից Չանգեղուրի գիւղացիութեան հասցրած վնասների և ալան-թալանի առթիւ գիւղերից ստացւած մի շարք համախօսականներից, ստորև զետեղում ենք Կոռընձոր և Տեղ գիւղերի ներկայացրած համախոսականների համառօտակի բովանդակութիւնը:

Կոռընձոր գիւղի 1920 թ. դեկտեմբերի 7-ի 207 ստորագրութեամբ կազմած համախօսականի մէջ զըրւած է:

«Յուլիսի 5-ին, 1920 թ. բօլշևիկները յանկարծ շրջապատեցին Կոռընձոր գիւղը և սկսեցին 11 գնդացիներից կրակել. սղամարդիկ և կանայք ահաբեկւած դէս ու դէն փախան. ով ջնկնում էր բօլշևիկների ձեռքը, առանց որ և է պատճառի, հրացանազարկ էին անում. ապա սկսեցին զինաթափել գիւղացուց: Ա. Ղարազոգեան և Մ. Մաշուրեան կաշառելով Աղրբէջանից, սօվե-

տական զօրքերին ներս հրաւիրեցին Ջանգեզուր: Բօլշևիկները սկզբնական շրջանում աշխատում էին համոզել գիւղացիներին, որ իրանք եկել են ազատելու նրանց պարագիտներից և առատ կերպով վանազան բարիքներ էին խոստանում: Այդ բոլորից յետոյ նրանք սկսեցին ցոյց տալ իրանց իսկական պատկերը—բռնութիւնները: Մարդիկ էին ձերբակալում, ուղարկում Գորիսի բանտը և ապա սպանում, առանց որ և է քննութեան ու մեղադրանքի:

Ապա սկսեցին ալան-թալանի ենթարկել գիւղը. ձի, կով, եզ, ոչխար, աւանակ, այծ, ցորեն, գարի և ուրիշ ուտելիղէն չմնաց, սիստեմատիկ կերպով բոլորը խլեցին գիւղացիներից և տարան, չգիտենք թէ ուր:

Սուզարկեցին տները և տարան վերմակներ, մահճակալներ, մետաքսեայ շորեր և այլն:

Այս ամենը նոքա կատարում էին առանց խտրութեան—բոլոր խաւերի նկատմամբ: Տուժում էր աւելի մեծ չափով աղքատ դասակարգը, երբ նրանից խլում էին միակ աւանակը կամ լծկանը:

Պակասը լրացնելու համար յանկարծ բերին և տաճկական ասկետներին, որոնք իրանց զազանային ինստիտուտները գործադրեցին կոյս աղջիկների ու գեղեիկ կանանց նկատմամբ, մի սրբապղծութիւն, մի արատ, որը տանել չէր կարող հայ ժողովուրդը և մենք խլացրած մեր ականջները, կուրացրած, մեր աչքերը, ապրում էինք անտառներում, այգիներում, տեսնել չէինք ուզում այդ բարբարոսութիւնները, լսել չէինք ցանկանում կանանց ճիչն ու աղաղակը, որանց ստիպում էին ցոյց տալ իրանց ամուսինների տեղը:

Գանակը ոսկորին էր հոսել, այլ ևս մեր ժողովուրդը համբերել չէր կարող և ընդառաջ գնալով ընդհանուրիս ցանկութիւններին ու հետեւելով ապստամբ Ղափանին ու Սիսեանին, մենք ևս բարձրա-

ցրինք ապստամբի ազատարար դրօշակը և նայեմբերի 21-ին դուրս քշեցինք բօլշևիկներին և բարբարոս ակեաններին մեր երկրից, երգւելով, որ այսուհետև մենք պատրաստ ենք մեռնելու և թոյլ չտալու մի բօլշևիկ անգամ ոտք դնելու մեր երկիրը, թալանելու և յափշտակելու մեր ունեցւածքը ու պղծելու մեր պապեկան օջախն ու սրբութիւնները:

Ստորև բերում ենք գիւղից տարած մթերքների, անասունների և պատճառած վնասների ցուցակը:

	հատ կամ փութ
Լծկան եզներ	80
Կովեր	42
Սւանակներ	75
Ոչխարներ	230
Ձիեր	12
Հաց, ցորեն և ալիւր	718 փ.
Գարի	538 փ.
Կորեկ	545 փ.
Զաւար	156 փ.
Կովի իւղ	13 փ. 28 գ.
Պանիր	35 փ. 30 գ.
Պոլիմպերիալ	28 հ.
Արձաթի դրամ	1975 մ.
Նիկալայեան թղթադրամ	8875 մ.
արծաթի իրեր-հին գներով	5,700,000
Բրդեղէն կտորներ	250 փ.

Տղամարդկանց հագուստ	187 կտոր
Կանանց արդու զարդ, ոսկու և արծաթի, հին գնեցող	857435
Կանանց շորեր	947631
Արբեշուսի և չթէ կտորներ	97,657
Խոտ	8560 փ
Դարման	1753 փ.

Վերոյիշեալ ցուցակը հաստատում եմ Կոռընձորի հասարակութեան կոմիսսար—ստորագրութիւն և կնիք:

Տեղ գիւղացիների 1920 թ. դեկտեմբերի 9-ին կազմած համախօսականներից բերում ենք հետևեալը. ստորագրած են 351 անձինք:

«Տեղ գիւղի ժողովուրդս, այսօր հաւաքելով պատմական խորհրդի, օրակարգի նիւթն էր մեծն Ռուսաստանի մնացորդ, կաշառւած բօլշևիկների հասցրած վնասը, որոնք կարմիր բանակի անւան տակ, եկել էին մեզ, չքաւոր ժողովրդիս փրկելու, հաց, չիթ, շաքար թէյ, նաւթ և երկրագործական մեքենաներ ու այլ մթերք տալու:

Կարմիր բանակը եկել էր մեզ հաւասարեցնելու և իբրև հարազատ եղբայրներ և ընկերներ, միատեսակ ապրեցնելու: Մեր կայք ու գոյքը անձեռնամխելի պէտք է լինէր, խօսքի, մամուլի ազատութիւն էինք սպասում:

Սակայն ինչ զարմանք, ոտք դրին մեր գիւղը թէ ոչ, սկսեցին հետզհետէ թալանել մեզ, բառիս իսկական նշանակութեամբ: Կարմիր բանակի համար աղքատի և ունեորի մէջ խտրութիւն չկար. ամենաչքաւորից անգամ տարան նրա ունեցած վերջին եզը, կովը և կամ աւանակը:

Զօրամասերը ապրում էին գիւղի ամենալաւ տներում և քանդում տների փայտեղէն մասերը ու վառում, իբրև յիշատակ թողնելով քարէ չոր պատերը:

Առանց որ և է պատճառի, ձերբակալում էին գիւղի երիտասարդներին, բանտ ձգում և ապա դէպի Շուշի տանում ու ճանապարհին կոտորում:

Իսկ երբ տաճիկ ասկերներին առաջ քաշեցին և մեզ մեր պատմական թշնամու ձեռքով կամեցան հոգեպէս և բարոյապէս սպանել, այն ժամանակ միայն, մենք զգացինք, որ եկած զօրքերը ոչ թէ կարմիր եղբայրներ են մեզ համար, արքայութիւն, բերող, այլ սև շարագործներ, որոնք եկել են մեզ թալանելու, քայքայելու և ֆիզիքապէս սպանելու:

Անկարող լինելով տանել բոլոր զըրկանքները, կեղեքումները և բռնութիւնները, որոշեցինք մեր կեանքի գնով և ապստամբութեամբ ձեռք բերել մեր ազատութիւնը և իբրև մի մարդ, մի հոգի, մենք ազատ մահը ստրուկ կեանքից բարձր համարելով, դուրս վճռեցինք այդ

գառնազգեստ գայլերին մեր երկրի սահմաններից դուրս:

Եւ վայնոցա, եթէ երբեից է կրկին փորձ կանեն մտնել մեր ազատ երկիրը, մեր մանուկից սկսած մինչև 100-տարեկան ծերունիները պատրաստ ենք հրացանով, բահով, քլունդով և փայտերով անգամ դիմադրելու սև սիրտ, սև գործ, սև հոգի ունեցող այդ կարմիր բանակ— կոչւածներին և մինչև մեր արեան վերջին կաթիլը պաշտպանելու «Ազատ Զանգեզուրը»:

Բօլշևիկների տիրապետութեան ժամանակ Տեղ գիւղը հետևեալ վնասներն է կրել:

Պատճէն

Ֆ Ո Ւ Յ Ա Կ

Տեղ գիւղի հասած վնասների, սովետական իշխանութեան ժամանակամիջոցում: Կազմւած է Տ-ին դեկտեմբերի 1920 թ.

№№ ըստ կարգի	Մնասունների և իրերի անունները	Մնասունների և իրերի թիւը և բաշք.
1	Ձիեր	75 հատ
2	Աւանակներ	237 »
3	Ջորիներ	13 »
4	Լծկան եզներ	312 »
5	Կովեր	115 »
6	Դանեք 1-2 տարեկ.	86 »
7	Ոչխարներ	784 »
8	Այծեր	183 »
9	Խոզեր	125 »
10	Հաւեր	2765 »
11	Իւղ	83փ ²⁰ գ
12	Պանիր	220 փ.
13	Զէթ	45 փ.
14	Մեղր	9 փ 25 գ
15	Բաքմազ	217 փ.
16	Նաւթ	13 փ.
17	Չորացրած թութ	150 փ.
18	Կարտօֆել	1355 փ

19	Յորեն և ալիւր	2460փ.
20	Գարի	1355փ.
21	Հաճար	1250փ.
22	Կորեկ	3465փ.
23	Ձաւար	675փ.
24	Ոսպ	180փ.
25	Հաց	1255փ.
26	Յորնի խուրձեր ձիւններին տւած և փշացրած	250 05
27	Գարու	3000 ,,
28	Հաճարի	1100 ,,
29	Կորեկի	550 ,,
30	Խոտ	15000փ
31	Դարման	17000,,
32	Գորգեր	936.
33	Կարպետներ	215,,
34	Ձուալներ	220 դ.
35	Խուրջիներ	161 հ.
36	Քանդիրներ	330 ,,
37	Անկողիներ	280 ձ.
38	Հագուստ տղամար-	230 ,,
39	դու, բրդից ,, ,, կանանց ,,	340 ,,
40	Մետաքսի կտորներ կանանց շորացու	180ա.
41	Բրդէ ,, ,,	90 ,,
42	Ժամացոյցներ ոսկ.	13 հ.
43	,, արծաթի	63 ,,

Խլած են ոսկէ և արծաթի ժամացոյցներ, մատանիքներ, կանանց գլխի փողեր, գոտիներ, նիկալայեան թղթադրամներ, կովկասեան բոներ, տաւարի կաշիներ, քահանայի շուրջառացու կտոր, դանակ, պատառաքաղ, կարի մեքենաներ և այլն և այլն:

Վառել են 7 սենեակներից բաղկացած զիւղի երկդասեան դպրոցը, 80 նստարաններ, 1500 ընտիր զրքեր, աթոռներ, սեղաններ և այլն:

Քանդած և աւերւած են զիւղի ժողովրդական տունը, նախկին փոստի շէնքը և 15-20 տուն, ուր զօրք էր ապրում, կատարեալ փլատակների է վերածւած:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԲՕՂԵՆԻԿՆԵՐԻ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԶԵՆԳԵՉՈՒՐԻՑ

Կատարեց այն, ինչ անխուսափելի էր, տեղի ունեցաւ այն, ինչ իրերի բնական և տրամաբանական ընթացքով պիտի լինէր:

Ազատասէր Զանգեղուրը, Ղափանը, Սիսեանը, Գողթանն ու Գենւազը, որ դարերի ընթացքում ամենաթանգ գնով պահել էին իրենց հայրենիքն ու ազգային արժանապատուութիւնը, կանգ չառնելով մեծամեծ զոհերի առաջ, անգամ չը վհատելով այն ժամանակ, երբ Լէնկ-Թեմուրներն ու Զինգիզ — խաները արեան բաղանիքի էին վերածել իրենց չքնաղ ու հպարտ հայրենիքը, բնականաբար, նոքա այս անգամ էլ չէին կարող հանդուրժել Ազրբէջանեան — բօլշևիկեան հորդաներին, որոնք եկել էին սօցիալապէս սպանելու, մեռցնելու հայ գեղջուկին, խելու վերջին պատառը որբի և սրբաւայրու ձեռքից, որոնք առանց այն էլ անտեսապէս բնութիւնից ծեծւած, հազիւ մի կերպ քարշ էին տալիս իրենց թշուառ գոյութիւնը:

Բօլշևիկները իրենց մեղրածոր լողունգներով երկնքի արքայութիւնը խոստացան հայ գիւղացի աշխատաւորութեան և դորա փոխարէն խլեցին նրանից նրա վերջին լծկան եզը, աւարեցին ու տարան այն բոլորը, ինչ որ տարիների ընթացքում հայ աշխատաւորը իւր կորաքամակ մէջքով ու կոշտացած ձեռներով տնտեսել էր: Ահաբեկման սոսկումի տակ իւրացրին հայ գեղջուկի կթան կոփն ու ոչխարը, լծկան եզն ու գոմշուկը, նրա վերջին գրաստը, նրա մերկութիւնը ծածկող հագուստը, արիւն քրտինքով և կեանքի գնով շախտերում ու նաւթահանքերում սև օրւայ համար հաւաքած նորա արցունքաւ կօպէկները, նորա երեխաների վերջին պատառը:

Այս բոլորը կատարուում էր օրը ցերեկով, յանուն սօցիալիզմի, յանուն աշխատաւոր հայ գիւղացու շահերի:.. որպիսի խաբէութիւն, որպիսի պատրանք, որպիսի սրբապղծութիւն սօցիալիզմի:..

Ազգերի համերաշխութիւն քարոզելով, բօլշևիզմը զինաթափ արեց երկրագործ հայ շինականին և մահացու գէնքը տալով հայի գարաւոր, պատմական ու հոգեբանօրէն հակառակորդ թաթարի ձեռքը, բնաջնջել էր ուղում ազատատենչ Սիւնիքի հայութիւնը: Այն, ինչ որ չ'կարողացաւ անել իւր կազմակերպւած բանակով, ուղիղ մէկ տարի սրանից առաջ, պանիսլամիստական Ազրբէջանը, բօլշևիկները ցանկացան իրա-

գործել և շնորհիւ յաւիտենականապէս հայու-
թեան և հայ աշխատաւորութեան նողկանքին
ու զզանքին արժանի դարագեօզեանների և
բակունցների հայադրուժ գործունէութեան,
բացւեցին ազատ Սիւնիքի պողպատեայ դռները
և ներս հրաւիրեցին կազմակերպւած մարդա-
սպաններն ու աւագակները—բօլշևիկները:

Ժողովուրդների եղբայրութիւն քարոզելով,
բօլշևիկներն իրենք էին կազմակերպում հարեան
ժողովուրդների միջև Բարդղիմէսեան սև ու
արիւնտ գիշերները... Հայը թուրքի դէմ,
թուրքը հայի դէմ, եղբայրը եղբօր դէմ, որդին
հօր դէմ, անա սրանք էին բօլշևիկների մեղրա-
ծոր լողունգների բովանդակութիւնը, նրանց
քարոզած ժողովուրդների եղբայրութեան այ-
լանդակ էութիւնը, նրանց իդէալների կվինտ—էս-
սէնցիան:

Բօլշևիկների օրով թագաւորում էր հա-
մատարած սոսկումն ու սարսափը, համատա-
րած արիւնտ և դաժան տեօրը... Մարդիկ ոչ
միայն չէին կարողանում աշատ խօսել, այլ և
նոքա չէին կարողանում ազատ մտածել:

Պօլիա ապեւներն ու Չեկաները պող-
պատեայ շղթայ էին զրէլ մարդկային ազատ
մտածողութեան, պրպտող և միշտ վերը սլացող
հոգու և գլացումի վրայ. մարդը դարձել էր մի
կենդանի դիակ. նա իրատունք չունէր տեսնել,
դիտել, զգալ, մտածել, ապրել... Անհատը իւր
բովանգազ հոգեկան էութեամբ կաշկանդւած էր,

մեռել էր: ձեռներեցութեան ոգին մարդկանց
մէջ, գոյութիւն չունէր անհատ. չկար հասարակա-
կան իրաւակարգ և անբողջութիւն, տեօրի սարսա-
փը մեռցրել էր հասարակական գիտակցութիւնը...
չկար ոչինչ:

Համատարած այս սոսկումի մէջ թագաւորում
էր միայն քմահա ճոյքը, որը բղխում էր այս կամ այն
բօլշևիկի հիւանդոտ ուղեղից. տիրականօրէն միայն
իշխում էին հասարակութեան տականքները—բօլ-
շևիկ կոչւածները, երեկւայ սրիկաները, մար-
դասպանները, գողերը, որոնք ընդունակ են մի-
այն անաշխատ կեանքի, ուրիշի աշխատանքով,
ուրիշի արիւն քրտինքով ապրելու...

Փրփրոտ բերաններով խօսում էին ամբի-
ոններից մարդը մարդուն շահագործելու դէմ,
բայց անխիղճ կերպով շահագործում էին
ուրիշի աշխատանքը, իւրացնում էին բանւորի
կոշտացած ձեռների աշխատանքի արդիւնքը:

Փքուն ճառերով խօսում և խոստանում էին
մարդկանց երջանկութիւն տալու, բայց խոստում-
ների տակ թագնւած անէծքն ու դժոխքն էին
բաժին հանում մարդկանց:

Յեղափոխականի ազնիւ իօրքերով հաւատա-
ցնում էին միամիտներին, որ իրենք եկել են հաւա-
սարութիւն բերելու բոլորի համար, բայց անխնայ
թալանում էին բոլորին, առանց դասակարգի խըտ-
րութեան. յափշտակում էին այն ամենը, ինչ տես-
նում էին, ինչ իրենց պէտք էր... Յանուն սօցիալիզմի

դաժան տիրապետութիւնը, բայց արդէն ուշ էր:

ժողովուրդը շատ լաւ էր ճանաչել ու հասկացել նրանց, շատ լաւ էր թափանցել նրանց սիրտն ու հոգին: Այլևս չէր մնացել մի հատիկ մարդ, որ լսած չ'լինէր նրանց «քաղցր խօսքը» և տեսած չ'լինէր այդ «քաղցր խօսքի» տակ թագնւած սև գործը:

Բռնութեան, ստի, կեղծիքի վրայ հիմնած տան հիմքերը խախտուել էին և նա պիտի շառաչելով խորտակէր, իւր տակն առնելով բոլոր շարագործներին....

II.

Վերաւոր Պիւնիքը սթափուել էր իւր լեթարգիական խոր քնից ու բաց աչքերով տեսնում էր, որ քաղաքական պտռնիկ և կարմիր շաւլատանները իրեն խաբել, անդունդի ծայրին են կանգնեցրել:

Բօլշևիկեան 5 ամսեայ տիրապետութիւնը իւր սոսկումնեցողութեամբ երեկւայ լուկեաց սիւնեցուն դարձրել էր բողոքող, քննադատող: Անկարելի էր այլևս հանդուրժել լայն բոլորը, ինչ տեսել, զգացել և փորձել էր իւր սեփական կաշու վրայ:

— Թող կորչեն խաբեբայ սրիկաները — գոռում էին երեկւայ հնազանդ, հլու հպատակները:

— Մահ, կամ ազատութիւն — յաղթականօրէն

շեշտում էր շղթայւած Սիւնիքի ազատատենչ երիտասարդը:

— Մենք խաբւած ենք, մենք մոլորւած — ամօթահար, բայց համոզւած շեշտով, կրկնում էին երեկւայ խաբւած միամիտները, որոնք բօլշևիկներին հետ ձեռք ձեռքի տւած, դեռ երեկ, եռանդով աշխատում էին:

— Ապստամբութիւն, միաբերան գոռում էին բոլորը, և կի՛ն, և աղամարդ, և ծեր, և երեխայ, և հարսուտ, և բանւոր...

Հրաշքը կատարւած էր...

Ապստամբութեան ազատարար սրբազան շեփօրը առաջին անգամ հնչում է Դաւիթ բէգի, Թորոս իշխանի հայրենիքից — Ղափանից, որտեղ ժողովուրդը գրեթէ անգէն ու անկազմակերպ, դուրս է գալիս ազատամարտի, իրենից թւով տասնապատիկ գերազանց և կազմակերպւած բանակի դէմ:

Բարբախտաբար հէնց այդ ժամանակ Ղափանում էր գտնուում բալիանների հերոսական կռիւների սիրահար Նժդեհը, որին ժողովուրդը խնդրում է անցնել ապստամբութեան դուխը, որին ժողովուրդը յանձնում է իւր արիւնտ, արդար դատը, լլկւած ու բռնաբարւած քոյրերի վրիժառութեան սրբազան ճիչը...

Նժդեհը, որին վիճակւած էր ամենածանր և անյուսալի պայմաններում ապստամբ Սիւնիքի ազատարարը լինել, չի ընկճուում, չի յուսահատ-

լում, ամեն ինչ կորած չի համարում, որպէս
 շատերն էին մտածում: Նա յամառօրէն զիշեր
 ու ցերեկ մտածման առարկայ է դարձնում մի-
 այն մի բան— արդարացնել իւր վրայ տածած
 ժողովրդի յոյսերն ու սպասելիքները— փրկել
 ժողովրդին բօլշևիկեան սպանդանոցից...

Ինչպէս ամեն տեղ, այստեղ ևս փոքրօրդինե-
 րը կացութիւնն համարելով անելանելի, թողնում,
 հեռանում են Նժդեհից, համարելով ամեն ինչ
 կորած, բայց եղան և գանձեցին փոքրաթիւ ըն-
 կերներ, պատիւ նրանց, որոնք խորապէս մտած
 մոզած լինելով իրենց մղած նպատակի արդար
 ընթացքի և պահպանման համար յանդիման
 որ ապստամբութեան և գրգռման արձագանք էր
 որը կարգանք էր տալիս մոզման և լիակատար
 քերով յարկադրելով ամբողջ քաղաքը յորո՞ծ
 թեան ստանալու և իր անհրաժեշտ քննարկները
 ւում և նա պահպանելով ամբողջական քաղաքը
 կիզել յանուն արդարութեան, ազատութեան, ի
 հայրենիքի և սոցիալիստական պայքարի և իր
 սուրբ գործի խորը վերջին փուլին մեծ նշանակա-
 ւոր և սպասելի միջոցով, իրենց պիտի լինէր
 Նժդեհի հետ: Եւ միայն հաստատուելով իր
 Մեծ շէրայի փոքր քաղաքի և արտապահման
 քի օրդին նրանք սկսեցին 20, 30 հոգիները արգա-
 երբ դէպի հայրենիքն ունեցած պարտքի և զի-
 տակցութեան ծանր խաչն ուսնելին առած
 բարձրանում էին Սիւնիքի Գողգոթան— հարաւ
 Խուստուփի ձիւնապատ կատարը:

Քաղցն ու ցուրտը, վիշտն ու տանջանքն
 էր այս խմբի անբաժան ընկերը և ամեն անգամ
 երբ նոքա լսում էին իրենց խիզախ հրամանա-
 տարի ոգեշունչ խօսքերը, մոռանում էին և
 վիշտ և տանջանք և դառնութիւն և ամեն ինչ:
 Նոքա իրենց երջանիկ էին զգում Խուստուփի
 ժայռերում և այրերում: Ազատութեան ուխ-
 տաւորների այս խումբը սակայն երկար չի
 մնում այստեղ, իջնում, անցնում է Արևիկի շը-
 ջանը (Գենւազ) և այստեղից արդէն նոցա ոչ
 մէկ ոյժ չէ կարողանում տեղահան անել, հե-
 ոացնել:

Արևիկի ամբողջ հայութիւնը, որպէս մի
 մարդ, հաւաքւում է Նժդեհի ապստամբ դրօշի
 տակ և սկսում է այնուհետև հերոսամարտը...

Արևիկին էր վերապահւած լինել ազատութեան
 Բէթլեհեմը, ուր պիտի ծնէր ու զարգանար Սիւնի-
 քի ազատութիւնը: Քառասուն և հինգ օր շարունակ
 տեղի են ունենում ճակատագրական կռիւներ,
 մէկը միւսից խիզախ, մէկը միւսից յանդուգն:

Երկարատև այդ կռիւները թուլացնում, հալե-
 ցնում են թշնամու թուով տասնապատիկ գերա-
 զանց բանակը և «կարմիրները» շարզած, ամօ-
 թահար կրնկակոխ փախչում Ղափան, թողնե-
 լով ապստամբներին առատ ուղմուար:

Հերոսամարտը աւելի ուժգին և ըմբոստ
 շարունակւում է Ղափանում: Բախտի անիւր
 արդէն թեքւել էր. երեկայ թուով հսկայ և գե-
 րազանցօրէն լաւ սպառազինւած «կարմիրները»

բանակը յարձակողականից անցնում է պաշտպանողականի:

Սոււարանում, մեռնում են ապստամբական խմբերը. դալիս, միանում են ապստամբներին երեկւայ լքւածները, որոնք ամեն ինչ կորած էին համարում և, որ ամենագլխաւորն է, թշնամույ խլած է այնքան զէնք և ռազմամթիւրք, որ անգամ երեխաներն ու ծերունիներն էլ են զինւում:

Մէկը միւսին յաջորդող ապստամբների յողթութեամբ պսակւած հերոսամարտը թուլացնում, ընկճում է թշնամուն, դարձնում նրան շանամարտունակ: Ապստամբների փայլուն այս յողթանակները գրաւական էին վաղւայ առօայտին: Հոգեպէս ուրախ էր ամբողջ Ղափանը, այս ուրախութեանը սակայն դեռ ամբողջապէս մասնակից չէր Նժդեհը: Նրա սիրտը առջորւում էր, երբ ամեն անգամ Սիւեանից ու Զանգեզուրից ստանում էր մէկը միւսից սարսռեցուցիչ սև լուրեր և նա մտածում էր ապստամբութիւն սկսել նաև Սիւեանում ու ընդհանուր գրոհով շարտել թըշնամուն մինչև Զաբուղ-Աւդալարը:

Նժդեհը ոչ միայն տաղանդաւոր կուռղ է ու զեկավար, նա անզուգական է նաև որպէս կազմակերպող:

Կարմիր բանակի պարտութիւնը կատարեցրել, գազազել էր «կարմիրներին» պետերին, որոնք նստած խորը թիկունքում, համարում էին իրենց տիրապետութեան վերջին օրերը և

այդ խալտառակ պարտութեանց վրէժը լուծում էին ոչ միայն անզէն ժողովրդից, որոնք ըսպէ առ ըսպէ սպասում էին Նժդեհին, այլև իրենց սովալլուկ, հաշմանդամ զինւորներից: Կարմիր զինւորներից 20 հոգի հրացանազարկ են լինում Գորիսի բանտում և 70 հոգի էլ Գորիսից տարւում, հրացանազարկ լինում՝ Ղարաղլաղի ձորում, միայն այն պատճառով, որ նոքա յանդգնել են հազուստ ու ստնաման պահանջել և այնպէս գնալ Ֆրօնս:

Հանգամանքների ներդաշնակ և յաջող դասաւորումը աւեսում եւ Սիւնիքի ազատութեան առօայտը: Նժդեհի խոհուն և հեռատես հրահանգները պարարտ հող են գտնում Սիւեանում, ուր այդ ժամանակ գտնւում էր տեղակալ (պարուչիկ) Պօղոս Տէր-Դաւթեանը, որը սիրւած էր ամբողջ Սիւեանի ժողովրդի և երիտասարդութեան կողմից, իբրև խիզախ և անվախ խմբապետի:

Այստեղ, Սիւեանում ևս կատարեց նոյն հրաշքը, ինչ որ Ղափանում: Ապստամբութիւնը բռնկւած էր և ժամ առ ժամ լայնանում ու մեծանում էր ապստամբական շրջանը:

Ամբողջ ապստամբութեան շրջանում, ամենից ուշագրաւն ու կարևորն այն էր, որ ամեն տեղ ապստամբութեան առաջին կտրապետները հանդիսանում էին «կոմունիստական ռեկոմենդներն ու եաչեյկաները» և այդպիսով ամենուրեք, սրի ու հրի վրայ հիմնւած այդ կու-

սակցութիւնը պարունակում էր իւր մէջ իւր իսկ գոյութեան ժխտումը... Շնորհիւ այդ ժրխաման, շնորհիւ Արեւիկի և Ղափանի փայլուն յաղթանակների, «կարմիր բանակը» բարոյալքել, ռազմունակութեան ոյժը կորցրել էր: Այստեղ ևս նա զարնւելով Սիսեանի ապստամբ ժայռերին, ջարդ ու փշուր եղաւ, հարւեցաւ, հանգաւ...

Պատմութեան անիւր շուռ էր եկել. երեկւայ ձեռնորդ, այսօր ձեռնում է, երէկւայ հլու հպատակը, այսօր թելադրում է իւր յաղթական կամքը:

Փայլուն ապստամբարտի անգուղական հերոսի—Նժդեհի վերջնագիրը— ուլտիմատումը, ուզուած կարմիր բանակին— մտքել ամբողջ Զանգեզուրը— աւելի ևս կատաղեցնում է «կարմիր պետերին» և սոքա վճռում են ինչ գնով էլ լինի, յաղթել Սիւնիքի անյաղթին և մաքրել ամբողջ Սիւնիքը ապստամբներից:

Սկսում է «կարմիրների» տենդային աշխատանքը և ռազմական ուժերի կենտրոնացումը:

Տեղական հայ կարմիր սրիկաների ստիպմամբ կազմակերպւում է կոմմունիստական շուկատ, շուռ հայ կոմմունիստներից, որոնք իբր տեղացիներ, իբր թէ խոշոր ծառայութիւն պիտի Բատուցէին կարմիրների յաղթութեան գործին: Դրազած խոշոր շուկատը բարեբախտաբար չէ անցնում 100-ից և նոյա սպասելիքները մնում են իբր երազ, իբր պատրանք:

Ճիշտ այդ ժամանակ, երբ «կարմիրները»

քշած, սղմած էին Գորիսի պատերին, Գորիս հասաւ Կուրօչկին, 1400 ձիաւորներով և 28-րդ գիււիգիայի 83 ամբողջ բրիգադան, որոնք տեղումս գաննող պորամասերի և վերջերս եկած 1200 տաճկական «կարմիր սակեարներին» հետ, մի պատկառելի զինւորական ոյժ էին ներկայացնում:

Բոլորը ահ ու սարսափով սպասում էին իրերի բնական ելքին: Նորից բորբոքւում, նորից սկսւում է անհաւասար կռիւր, կռիւ, բոլոր ճակատներից, կռիւ միաժամանակ և ամբողջ թափով:

Տաթևի սիգապանց լեռներն ու ձորերը, Ինջարելը, Յայլին, Երիցաթումբը, Ղարաքլիսան և ճակատից անյաղթ Ղափանը, գերագոնցօրէն դառնում են կռիւ թատերաբեմ, ուր վճռում է մէկի կամ միւսի բախտը:

Տասներկու օրւայ վերջին արիւնահեղ կռիւները վերջնականապէս ամբապնդում են սպրտաամբներին անպարտելիութիւնը:

«Կարմիրները» յաղթւած ու ջարդւած, գլխիկոր վախշում, մտնում են Գորիս, իսկ բօլշևիկների «անյաղթ» յորջորջուող Կուրօչկինի ձիաւոր գիււիգեան կարցնելով իւր ուժերի ուղիղ կէսը, առանց ետ նայելու, փախշում է մինչև Շուշի:

Քնած չէր այդ ժամանակ և բուն—Չանգեզուրը:

Սուբհանդակները ամենայն օր նորանոր լուրեր էին բերում կուրի դաշտից և Նժդեհի ու սիսեանցիների փառապանծ յաղթութիւններից:

Ահաբեկւած, բայց ազատութեան անյազ ծարաւից պապակւած զանգեզուրցին այդ ժամանակ կատարում էր լուռ, անմոռնջ իւր սըրբազան գործը: Նա հիւսում, շինում էր անխօս ու գաղտնի ապսամբութեան փառանդ սանար, և պատրաստ էր ամբողջովին ողջակիզել ազատութեան արիւնոս հաճապահին, քան շարունակել գրաստային անպատիւ կեանքը:

Նոյեմբեր 20-նն է, մի անմոռանալի և խորհրդաւոր օր, բուն — Չանգեզուրի ազատագրութեան արիւնոտ պատմութեան համար:

«Կարմիր պետերը» փսփսուկով էին յայտնում իրար իրենց վերջնական խայտառակ պարտութիւնը. այլևս ոչ մի կասկած, որ վաղը, միւս օրը ձիթենու ճիւղերով զանգեզուրցին պիտի տօնէր իւր բոնարարւած ազատութեան, լլկւած նամուսի, ստնահաւած ազգային արժանապատւութեան ազատագրութեան Մեծ — Տօնը:

Նոյեմբեր 20-ի, լոյս 21-ի գիշերւայ խորհրդաւոր մթութեան մէջ դարբնւեց Չանգեզուրի ազատութեան վեհ գործը և առաւօտեանն արդէն լսում էր ձերբերի և մանուկների բերաններից օրհնութեան և ցնծութեան խօսքը:

ԲՈՆՈՒԹԵՆ, ՍՏԻ ԵՒ ԱԵՂԺԻՔԻ ՎՐԱՅ ՀԻՄՆԱԸՎ ԲՈՒՆԵՐԿԵՆ ԳՆԺԱՆ ԶԷՆՔԸ ԸՆԹԱՆՔԵԼՈՎ ՎՐԱՅ ԷՐ ԳԼՈՐԲԵԼ...

Գժոխն ու անձնք տապալւած եր...

Նոյեմբեր 22-ին, առաւօտեան ժամը 12-ին, ամբողջ Գորիսի և շրջանի ժողովուրդը, ապստամբ զինւորութիւնը «Մեր հայրենիք ազատ, անկախ» երգելով, հայ եկեղեցու քաղցր զօղանջների տակ, աղ ու հացով դիմաւորեց ԻՐ ՍԻՐԵԼԻ ԱՋԱՏՐԱՐԻՆ — ՆժԳԵՀԻՆ և նորա յաղթական մուտքը շնորհաւորեց: Հազարաւոր շրթունքներ օրհնութեան մրմունջն էին թօթովում. բոլորի երեսին փայլում էր ազատութեան ժպիտը...

ՍԻՐԵՆՔԸ ԱՋԱՏ ԷՐ ՈՒ ԱՆԿԱՍ...

Բօլշևիկներին Չանգեզուրից դուրս վրոնդելուց յետոյ, ընարւում է անմիջապէս բուն Չանգեզուրի համար Գիւղացիական ժամանակաւոր Խորհուրդը, բաղկացած 7 հոգուց, որին և յանձնւում է ապստամբ երկրի բախտը, մինչև պատմական Տաթևի վանքի համազանգեզուրեան համագումարը:

Գ. Խաչատրեան.

1921 թ. յունւար 20
Գորիս

ՀԱՐԱՋԱՆԳՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

1920 թ. դեկտեմբերի 25-ին, Չանգեզուրի հայ ժողովրդի ցանկութեամբ պատմական Տաթևի վանքում կայացաւ համագանգեզուրեան համագումարը, ուր ներկայ էին Չանգեզուրի բոլոր շրջանների գիւղօրայքից ընտրւած 100 պատգամաւորները, Չանգեզուր-Գողթանի Սպարապետ Նժդեհը, Չանգեզուրի բոլոր շրջանային խորհրդների 15 ներկայացուցիչները, ընդամենը 118 հոգի:

Կէսօրւայ ժամը 2-ին ժողովը բանում է Բուն-Չանգեզուրի Գիւղացիական ժամանակաւոր Խորհրդի նախագահ Տ. Մելիք-Յուսէյինեանը և առաջարկում է ընտրել համագումարի գիււան: Չայների մեծամասնութեամբ ընտրուում են — Նախագահ՝ Գեղէն Տէր-Մինասեան, փոխ-նախագահներ, Եղոր Յարութիւնեան և Տիգրան Մելիք-Յուսէյինեան, քարտուղարներ՝ Սամուէլ Մաշուրեան և Նիկայա Դորունց: Նախագահը նիստը

բաց յայտարարելուց յետոյ, համառօտ կերպով բացատրում և համագումարի պատմական նըշանակութեան, նրա կատարելիք դերի մասին և առաջարկում է անցնել օրակարգի հետեւեալ հարցերի քննութեանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ :

1) Չեկուցում Հայաստանի քաղաքական անց ու դարձի մասին և համագումարի բուն նիւթը, դիրքը:

2) Չեկուցում մեր քաղաքի քաղաքացիական հուրդների, գործունէութեան մասին:

3) Ինքնավար Արեւիկի շրջանի կազմակերպութեան ձևը (КОНСТИТУЦИЯ):

Իշխանութեան կազմակերպումը:
ա) Սպարապետի շրջանում:
բ) Ինքնավար Արեւիկի պարլամենտի գիււանի ընտրութիւնը:

գ) Գիւղացիական խորհրդի կազմակերպութեան ձևը:

դ) Գիւղացիական կենտրոնացման ձևը:

ե) Գիւղացիական կենտրոնացման ձևը:

զ) Գիւղացիական կենտրոնացման ձևը:

է) Գիւղացիական կենտրոնացման ձևը:

8) Գիւղացիական կենտրոնացման ձևը:

9) Պետական ծառայողների ուճիկների նորմաների որոշում.

10 Մասնաւոր և խոշոր սեփականութիւնների պետականացումը.

ա) Վանքապատկան և եկեղեցական,

բ) Խաների, բէգերի և մելիքների,

գ) Արդիւնարերութեան:

11) Ընթացիկ հարցեր.

ա) Որբանոցի,

բ) Զուլճականոցի,

գ) Նախկին կառավարութիւններից գանձազանձնաւորութիւնների մօտ մնացած գումարների պահանջման հարց:

դ) Իրամների գործադրութիւնը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն .

1) Մի շարք ներկայացուցիչների երկար ու բաշմակողմանի արտայայտութիւններից յետոյ, համագումարը բուն ծափահարութիւններով և ուսանելով ընդունում է միաձայն հետևեալ բանաձևը. — Զանգեզուրի մի բուն տականքների և ազգութեանը նրաւիրանօք, առանց ազգաբնակչութեան կամքն ու ցանկութիւնը հարցնելու, Զանգեզուր մտան սօվետական զօրամասերը, որոնք իրենց 5 ամսեայ տիրապետութեան ընթացքում անտեսապէս քայքայեցին Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութիւնը:

Սօվետական հրամանատարութիւնը հէնց աստիճան քայլից, գաւառիս գիւղացիութեան նկատմամբ տխուր իր աւերիչ, քայքայիչ քաղա-

քականութիւնը, որի առաջ նսեմանում են պատմական Լենկ-Թեմուրեան և արևելքի բարբարոսների արշաւանքներն ու գործելակերպը: Հայ աղքատ գիւղացիութեան տնտեսապէս քայքայւած շրջանում, նա որոնում էր բուրժուական տարրեր և կապիտալիստների դէս մղելիք քաղաքականութիւնը գործադրում աղքատ, անօգնական գիւղացիների ու այրի կանանց դէմ: Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարւաւ մեր աղքատ գիւղացու միակ եզը, կովը, ձին ու աւանակը, գրաւեց նրա անասունների կերը և թողեց մերկ ու զուրկ ամեն ինչից: Սօվետական հրամանատարութիւնը մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լօզունգները, աւերեց, հողին հաւասարեցրեց մեր գիւղերը և իր գրաւածների հանդէպ մեզ չը աւաւ մի թել անգամ: Նա անկարող եղաւ ամբողջ Զանգեզուրին տալ մի գրւանքայ նաւթ անգամ, չնայելով մեզ նաւթ, մանուֆակտուրա և այլ մթերքներ տալու խոստումներին:

Այս բոլորից յետոյ, մենք համոզուեցինք, որ սովածների այդ բանակը եկել էր միմիայն յափշտակելու մեր կայքն ու գոյքը, թալանելու մեզ և իսպառ սննդացնելու: Սօվետական կառավարութիւնը իրեն յատուկ արեան բաղանիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ և տասնեակներով կոտորեց նրանց, չխնայելով մեր գրական վաստակաւոր գործիչներ Խորէնուն, Շիրինեանին և տարիներ շա-

Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Չանգեղուրի նախկին սահմանները:

2) Համագումարը լսում է շրջանային խորհուրդների համաուօտ զեկուցումները և զիտողութիւնները իրենց գործնէութեան մասին և առնում է ի գիտութիւն:

3) Համագումարը միաձայն ընդունում ու հաստատում է ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձևի հետեւեալ գլխաւոր գծերը—

Սոյն համագումարը ճանաչել ինքնավար Սիւնիքի բարձր օրէնսդրական մարմին-պարլամենտ և վերապահել նրան Սիւնիքի բախտի լիակատար տնօրէնութիւնը:

ա) Պարլամենտը հրաւիրում է տարեկան առնւազ երկու անգամ, իւր պրեզիդիումի կողմից, իսկ բացառիկ պայմաններում, իր անգամների կիսի կամ պրեզիդիումի պահանջմամբ:

բ) Պարլամենտի անդամները ընտրւում են երկրի ազգաբնակութեան կողմից հետեւեալ ձևով: Մինչև 100 ծուխ ունեցող զիւղական համայնքը տալիս է մէկ, 100-ից մինչև 200 ծուխ ունեցողները՝ երկու, և 200-ից աւել ծուխ ունեցողները՝ երեք ներկայացուցիչ: Ընտրութիւնները կատարւում են ընդհանուր ընտրողական ըստ անդամ սխտեմով:

գ) Պարլամենտը ընտրում է 6 ամիս ժամանակով 9 հոգուց բաղկացած կառավարութիւն և ցրւում: Մինչև պարլամենտի նոր նստաշրջանը, կառավարութեանն է անցնում այդ երկրի զինւորական և քաղաքացիական բոլոր գործերի ղեկավարութիւնը, որը և կիրառում է կեանքի մէջ, Պարլամենտից բղխած բոլոր օ-

ւանքներն ու որոշումները:

Ծանօթութիւն. Պարլամենտը կառավարութեան անդամ կարող է ընտրել նաև ոչ պարլամենտի անդամներից:

դ) Կառավարութեանն է վերապահւում զինւորական ընդհանուր հրամանատարի—սպարապետի հրաւիրումը և արձակումը:

ե) Կառավարութեանն է վերապահւում պատերազմ յայտարարելու և աշտութեան բանակցութիւններ վարելու իրաւունքը, իսկ արտակարգ դէպքում, այդ վերապահւում է նաև սպարապետին:

զ) Երկրի թէ քաղաքացիական և թէ զինւորական կառավարչական ձևերի հաստատումը և օրէնսդրութիւնը:

է) Կառավարութիւնն ունենում է հետեւեալ վարչութիւնները 1) Ներքին—գործերի, 2) Արտաքին-գործերի, 3) Պարենաւորման, 4) Արդարադատութեան, 5) Ֆինանսական, 6) Լուսաւորութեան, 7) Առևտրա-Արդիւնարարութեան, 8) Հողային, 9) Դասնապարհների հաղորդակցութեան (պոստ, հեռաւիթ, հեռախոս և խճուղի) և 10) Խնամատարութեան:

ը) Բոլոր խոշոր և կարևոր խնդիրները, մասնաւորապէս ներքին ու արտաքին քաղաքականութեանը վերաբերւող, իրենց լուծումն ստանում են ոչ թէ այս կամ այն վարիչի, այլ կառավարութեան ամբողջ կազմի կողմից:

թ. Բոլոր պատասխանատու պաշտօնեաները հաստատում են կառավարութեան կողմից, վարիչներին առաջարկութեամբ:

ժ. Ձիւրքական բոլոր տեսակի գործերը սարւում են սպարապետի ղեկավարութեամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում կառավարութեան:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԻՐԱԽԱ- ՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.

ա. Միւնիքը բաժանուում է 6 շրջանների. —
Բուն—Ձանգեղուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի
ձոր, Սիսեան և Գենուզ: Իւրաքանչիւր շրջանում
կազմուում է շրջանային գործադիր մարմին՝ բաղկացած
մեծ շրջաններում հինգ, իսկ փոքր շրջաններում՝ 3 հո-
գուց, որի անդամները ընտրուում են պարլամենտի, նոյն
շրջանից ուղարկւած, անդամների կողմից: Շրջանային
գործադիր մարմնի կազմը ընտրուում է 6 ամսով:

բ. Շրջանային գործադիր մարմինները իրենց
գործնէութեան մասին միշտ զեկուցում են կառավա-
րութեան, ներկայացնելով իրենց հաշւետուութիւնը
ի հաստատութիւն:

գ. Շրջանային գործադիր մարմիններին է վերա-
պահուում իրենց շրջանի ներքին այս կամ այն հարցի
լուծումն, որոնք համապետական բնոյթ չեն կրում:

դ. Շրջանային գործադիր մարմինները ունենում
են իրենց հետեւալ մասնաճիւղերը: 1. Ներքին—գոր-
ծերի, 2. Պարենաւորման և 3. Զինւորական: Շրջա-
նային մարմիններին կից բացւում է նաև ազիտացիոն
բիւրօ:

Մանօրութիւն: Շրջանային գործադիր մարմիննե-
րը իրենց շրջանի գիւղերում կազմակերպում են գիւ-
ղական զինւորական վաշտեր և գիւղական ինքնա-
պաշտպանութեան կոմիտէներ:

ե. Շրջաններին վերաբերող բոլոր խոշոր ու կա-
րեւոր հարցերը վճուում են կառավարութեան կողմից:

ԳԱԽԱՌԱԿԱՊԵՏՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻ-
ՍԱՐՆԵՐ

Իւրաքանչիւր շրջան կամ գաւառակ ունե-

նում է իր գաւառակապետը և շրջանային կո-
միսարները, որոնց ընտրուում է շրջանային գոր-
ծադիր մարմինը իր միջից և հաստատուում
կառավարութեան կողմից:

ա) Ղափանի շրջանն ունենում է 1 գաւառակապետ
և 3 շրջ. կոմիսարներ

բ) Սիսեանի շրջանը՝ 1 գաւառակապետ և 1 շրջ.
կոմիսար

գ) Բուն-Ձանգեղուրի շրջ. 1 գաւառ. և 1 կոմիս.

դ) Տաթևի ձորի ,, 1

ե) Դարաբասի ձորի ,, 1

զ) Գենուզի ,, 1

ԳԻՒՂԱՆԱ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Իւրաքանչիւր գիւղ կամ համայնք ունե-
նում է իր գիւղական կոմիսարը: 100-ից աւել
ծուխ ունեցող գիւղերը ունենում են նաև
կոմիսարի օգնական, թէ առաջինը և թէ վեր-
ջինը ընտրուում են գիւղական հասարակութեան
և համայնքի կողմից, ընդհանուր սկզբունքներով
և հաստատուում են նոյն գիւղի շրջանային
գործադիր մարմնի կողմից:

ԻՆՔՆԱՎԱՐ ՍԻՒՆԻՔԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Միւնեաց ինքնավարութեան վերահսկիչ
մարմինը լիազօր է կօնտրօլի ենթարկել պետա-
կան բոլոր հիմնարկութիւնների, որոնց թւում
նաև բոլոր վարիչների հաշւետուութիւններն ու
գործողութիւնները:

4 ա. Համագումարը միաձայն որոշում է՝

հրաւիրել իր ազատորար, հերոս Նժդեհին, որպէս Սիւնեաց սպարապետ և բուն ծափահարութիւններով իր կատարեալ վստահութեան քէն ապով իր բազըը յանձնում է նրան:

բ. Ինքնավար Սիւնիքի կառավարութեան համար առաջարկած 15 թեկնածուներից, ձայների մեծամասնութեամբ, զադոնի քէարկութեամբ ընտրուում են հետևեալ 8 անձնաւորութիւնները, Գեղէն Տէր-Մինասեան, Նիկոլայ Գորունց, Իսրայէլ Մելիք-Փարսազանեան, Գէորգ Գրիգորեան, Նգոր Յարութիւնեան, Մկրտիչ Տէր-Մկրտչեան, Տիգրան Մելիք-Յուսէյիսեան և Սամուէլ Մաշուրեան և զրանց անձնափոխանորդ՝ Մինաս Մինասեան: Գենուզի շրջանին իրաւունք է արուում ընտրել մի ներկայացուցիչ և ուղարկել կառավարութեան կազմը լրացնելու համար:

գ. Ինքնավար Սիւնիքի վերահսկիչ մարմնի անդամներ ընտրուում են հետևեալ 3 անձնաւորութիւնները՝ Գասպար Սաչատրեան, Մուշեղ Ոսկանեան և Գէորգ Գէորգեան, իսկ զրանց անձնափոխանորդներ՝ Տիգրան Սազանդարեան և Շիրին Շիրինեան:

5. Մտքերի երկար փոխանակութիւններից յետոյ, որոշուում է իշխանութեան կե՛ որոնատեղին ընտրել Գորիսը:

6. Գարլամենաղ մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ միաձայն ընդունուում է հետևեալ բանաձևերը, մեր վերաբերմունքի մասին,

դէպի հարևան պետութիւնները:

ա) Զանգեզուրը միշտ ձգտել է և ձգտում է լինել մայր երկրի՝ Հայաստանի հանրապետութեան անբաժան մասը, բայց նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխութիւնները, որ նա ստիպւած մի շարք քաղաքական անբարեյաջող հանգամանքներից յայտարարել է իրեն խորհրդային, մի իրաւակարգ, որի հետ երբէք չէ կարող հաշուել մեր ժողովուրդը, պարլամենտը որոշեց — մինչև նրա այդ իրաւակարգից բաժանուելը, զործել սեպարատ և ապրել ուրոյն կեանքով:

բ) Զանգեզուրի վերաբերմունքը դէպի Ադրբէջանի կառավարութիւնը լինելու է բարեկամական, բայց նա առայժմ չէ կարող սերտ յարաբերութիւնների և երթևեկութեան մէջ մտնել Ադրբէջանի հետ, մինչև երկու հարևան ժողովուրդների փոխադարձ վստահութիւնը կատարեալ չը լինի»:

գ) «Զանգեզուրի փոխ — յարաբերութիւնը Պարսկաստանի հետ եղել է միանգամայն սերտ և բարեկամական ու կը մնայ: Նա Պարսկաստանում ունենալու է իր ներկայացուցիչը, որը աւելի-քան սերտ յարաբերութիւնների մէջ պէտք է մտնի այդ կառավարութեան հետ առևարական և հաղորդակցութեան անտակետներից:

դ) Զանգեզուրի փոխ — յարաբերութիւնները իր հարևան թուրքերի հետ, 3 տարուց ի վեր,

շնորհիւ արտաքին պրօվօկացիաների և քաղաքական միջամտութիւնների, եղել է թշնամական, այսօրւանից համագումարը լիայոյս է, որ այդ անտեղի թշնամանանքը կը դադարի երկու դարևոր հարեանների միջև, տեղի տալով սերաբարեկամութեան»;

7. Պարլամենտը միաձայն որոշում է ինքնապաշտպանութեան հարցի վերաբերմամբ բոլոր միջոցների ձեռնարկումը և գործադրութիւնը թողնել սպարապետին:

8. Մի շարք թեր ու զէմ կարծիքներից յետոյ, պարլամենտը ձայների մեծամասնութեամբ ընդունում է Գ. Գրիգորեանի հետևեալ բանաձևը: շրջաններում կամաւոր հանգանակութիւն կատարել և մթերքը կենտրոնացնել շրջանային պետական շտեմարաններում: Կըսիւնեւի ընթացքում, շրջանները կը մատակարարեն իրենց ոյժերի պարենը: Պետական հիմնարկութիւնները համար, շրջանների պահեստներից բաժին հանել համեմատական քանակութեամբ, քասկլաղկայի ձևով, և մեծամասնականներից մնաած իրերը և պետական գոյքերը փոխանակելով հացահատիկների հետ:»

9. Պարլամենտը ուժիկների նօրմաների որոշման հարցը թողնում է սպարապետին:

10. Պարլամենտը ընդունում է մասնաւոր խոշոր սեփականութիւններ ղ պետականացումը,

ինչպէս վանքապատկան—եկեղեցական և բէգական, նոյնպէս և ուրիշ խոշոր կալածատէրերի:

11 Պարլամենտը օրակարգի ընթացիկ հարցերում զետեղւած 4 հարցերի որոշումները թողնում է կառավարութեան:

Օրակարգի հարցերը վերջացնելուց յետոյ, կաթղացում է Արևիկի շրջանից ստացւած հետևեալ հեռագիրը—Տաթև, Զանգեզուրի սպարապետ պ. Նժդեհին:

«Ձեր կարգադրութիւնը՝ ուղարկել ներկայացուցիչներ, Տաթևի համագումարը, Արևիկի Փրկութեան Կոմիտէն ստացաւ ամսի 24-ին, երեկոյեան: Զգալով, որ կուշանանք, հրաւիրեցինք ամսոյս 22-ին շրջանային համագումար, որտեղ ներկայ էին Արևիկի 12 զիւլերի ներկայացուցիչներ, թւով 68 հոգի, բացակայում էին Կարճևանի և Ապկէզի ներկայացուցիչները: Արևիկի զիւղացիական պատգամաւորների ժողովի օրակարգի հարցերն էին՝

ա) Հայաստանում տեղի ունեցած յեղաշրջումը և Արևիկի ժողովրդի բռնելիք դիրքը:

բ) Համազանգեզուրեան համագումարը ներկայացուցիչներ ուղարկելու հարցը:

Կարգադրւած էր բոլոր զիւղերում հասարակական ժողով գումարել, քննել այդ հարցերը և ուղարկել ներկայացուցիչներ՝ մանդատով:

Գիւղացիական պատգամաւորների ժողովը որոշեց Տաթևի համագումարին շրջանի կողմից ներկայացուցիչներ ուղարկել Դաւիթ Դաւթեան

նին և Սաչատուր Դանիէլեանին: Պատգամաւոր-
ները գուրս եկան Մեղրիից ամսոյս 22-ին, Լիճք-
Տաշտոնի սարը կապ լինելու պատճառով, յետ
դառան, անցան հանքերը: Առաջին հար-
ցին ժողովը պատասխանեց հետեւեալ բանաձևով,
որը ամբողջովին հեռախօսագրում ենք Ձեզ:
«Արևիկի տասներկու գիւղերի ներկայացու-
ցիչներս, թուով փախսուեն և ութ հոգի, ղեկտեմբերի
22-ի ժողովում քննութեան առնելով ներկայ
քաղաքական գրութիւնը Հայաստանում, հե-
տեւեալ որոշումը արձակեց: Բօլշևիկա-
կան իշխանութիւնը բռնի կերպով է փաթաթ-
ւած հայ ժողովրդի վզին, Հայաստանը սովետա-
կան է յայտարարւած տաճկական և ուսսական
գորքի բռունցքի ճնշման տակ: Նորմալ պայման-
ներում երբէք նման քաղաքական յեղաշրջում
չէր կարող կատարւել Հայաստանում, ընդհակա-
ռակը, շատ անգամ հայ ժողովուրդը ցայտուն
կերպով արտայայտել է, որ **ԻՆՔԸ ԱՉԱՏ ԵՒ ԱՆ-
ԿԱՍ ՀԱՅՐԵՆԻՔ Է ՅԵՆԿԱՆՈՒՄ**, և որովհետև բռ-
նակալական ստոր միջոցներով մի ժողովրդի
վզին փաթաթւած իշխանութիւնը տեւական լինել
չէ կարող, ինչպէս նաև այդ իշխանութիւնը
վայելել չի կարող ժողովրդի մեծամասնութեան
հաւատն ու վստահութիւնը: Արևիկի ժողովրդի
ներկայացուցիչներս այն ամուր համոզումն
ունինք, որ շուտով Հայաստանի հայութիւնը
ոտքի կը կանգնի և զգաւորով դէն կը շարտի

այն լուծը, որը այսօր ակամայից ընդունել է
իր վրայ: Ոտքի կը կանգնի նոր ցասումով,
շարդ ու փշուր կանի այն երկաթէ կապանքները,
որոնցով սովետական իշխանութիւնը կապկպել է
թրեն և նորից Արարատեան սրբադան դաշտե-
րում կը ծածանեցնի ազատ և անկախ կեանքի
կարմիր գրօշակը: Արևիկի ժողովրդական ներ-
կայացուցիչներս համոզւած ենք, որ այս
սպոտամբութիւնը աւելի արագ կը կատարւի,
եթէ Չանգեզուրը կանգուն մնայ իր սահման-
ներում, իսկ ժողովրդի հոգին և կամքը անընկճե-
լի իր հերոսական որոշման մէջ, այն է՝ ապրել
ազատ և այդ իսկ նկատարումներով, Արևիկի
ժողովրդական ներկայացուցիչներս ղեկտեմբերի
21-ի ժողովում գտանք, որ մեր հորիզոնների
վրայ դեռ փրկութեան ճառագայթները ընդմիշտ
չեն մարել, որ կայ փրկութեան ճանապարհ,
ուստի որոշեցինք պաշտպանւել մինչև վերջին
հնարաւորութիւնը:

Որոշեց թոյլ չտալ ոչ մի օտար գորքի և օտար
մարդկանց ներս խուժելու մեր երկրի սահման-
ները և խառնել ու մեր ներքին գործերի մէջ»:

Ներկայացուցիչներ՝ 1, Դաւիթ Դաւթեան և
2, Սաչատուր Դանիէլեան 26 XII 1920 թ.
Երեկ, ժամը 8-ին, հանքերից:

Համագումարը բուռն ծափահարութիւննե-
րով լսում է Արևիկի ներկայացուցիչների հեռա-
խօսագիրը և առնում է ի գիտութիւն: Համա-

գումարի նիստերը երեք օր տևելուց յետոյ,
փակուում է ղեկտեմբերի 27-ին, երեկ. ժամը 3-ին:

Համագումարի նախագահ Գեորգիոն Տեր-Մինասեան

Փոխ նախագահներ | 1, Ազոտ Յարուքիւնեան
| 2, Տիգրան Մելիք-Յուսէյիւնեան


Քարտուղարներ | 1, Սամուէլ Մաշուբեան
| 2, Նիկ. Դօրունց

Ստորագրած են արձանագրութեանը մէկ հարիւր
վեց 106 ներկայացուցիչներ:

Ինճնավար Միւնիքի եռհրդարանի Դիւան

3-ին յունւարի 1921 թ.





« Ազգային գրադարան



NL0035332

2004

108/154

Արդիւնքը յասկարում է երրայրահան զե-
րեզմանի մրցողութեան հանգնեցնելու պարծիր:

[Faint, mostly illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.]

ԳՐՆՆ Է 5000 ԵՄՔ.